# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2020 թվականի N 24-Ա

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2020ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ընդունել ի գիտություն Սևան համայնքի բյուջեի 2020թվականի 1-ին եռամսյակի կատարման մասին հաղորդագրությունը / թիվ 1, 2, 3 հավելվածները կցվում են /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

HԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2020 թվականի N 25-Ա

## Ք. ՍԵՎԱՆ, ԳՈՄԱՁՈՐ ԹԱՂԱՄԱՍ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ «ՄԱՇՏՈՑՆԵՐ» ԿՈՉՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզում 2020թվականին կանխատեսվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման միջոցառումների պլան-ժամանակացույցի 28-րդ կետը, ինչպես նաև համայնքի բյուջեի սուղ հնարավորությունները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հրատապ ծրագիր համարել ք. Սևան, Գոմաձոր թաղ, Խարհուրդների փողոցից մինչև «Մաշտոցներ» կոչվող տեղամասի 850.0մ սելավատարի հունի մաքրումն ու պատերի վերականգնումը՝ հնարավոր վտանգները կանխելու նպատակով:
2. Հրատապ ծրագրերի շրջանակներում «Ք. Սևան, Գոմաձոր թաղ, Խարհուրդների փողոցից մինչև «Մաշտոցներ» կոչվող տեղամասի 850.0մ սելավատարի հունի մաքրում ու պատերի վերականգնում» ծրագիրը ներկայացնել ՀՀ կառավարություն պետական ֆինանսավորում ստանալու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2020 թվականի N 26-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել գույքահարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ**

**դրամներով**

| Հ/Հ | Փոխադրամիջոցի սեփականատիրոջ անուն, ազգանուն | փոխադրամիջոցի մակնիշը | փոխադրամիջոցի պետհամարանիշը | Մայր գումար | Տույժի զիջում |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արթուր Հովսեփյան | MERCEDES-BENZ C 240 | 91 UQ 100 | | 4340 |
| 2 | Մխիթար Հովսեփյան | OPEL ZAFIRA 1.8 | 91 MO 100 | | 2292 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1
Սևան համայնքի ավագանու՝
14.05.2020թ. N 24-Ա որոշման

Հաղորդագրություն

2020 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի վերաբերյալ

Եկամուտներ

Սևան համայնքի 2020թվականի 1-ին եռամսյակի բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 83.6%-ով. 206.0մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 172.2մլն. դրամ:

Նախորդ՝ 2019թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 1.8%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 3.0մլն. դրամ: 2020թվականի 1-ին եռամսյակի բյուջեի վարչական մասը կատարվել 110.1%-ով /պլան՝ 152.0մլն. դրամ, փաստացի՝ 167.4մլն. դրամ/:

2019թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի 2020թվականի առաջին եռամսյակի վարչական մասում ավելացված եկամուտները կազմել են 24.9մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2019թվականի համեմատությամբ ավելացել են 17.5%: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 132.4%-ով /պլան՝ 47.3մլն. դրամ, փաստացի՝ 62.6մլն. դրամ/:

Նախորդ՝ 2019թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 26.3%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումն ավելացել 13.0մլն. դրամով:

2020թվականի 1-ին եռամսյակի ֆոնդային բյուջեն կատարվել է 20.2%-ով /պլան՝ 24.0մլն. դրամ, փաստացի՝ 4.8մլն.դրամ/:

2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացել են 2.1մլն. դրամ կամ 80.3%-ով:

Նախորդ՝ 2019թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամտատեսակների գծով, բացառությամբ հողի հարկի, ապահովվել է աճ, ընդհանուր՝ 12.8մլն. դրամ: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել են 78.9%-ով: 194.7մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց կատարվել է 150.9մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 43.8մլն. դրամ, որը պայմանավորված է ՀՈԱԿ-ների՝ հունվար ամսին չաշխատելով, մշակույթի պալատի հիմնանորոգմամբ: Ավելացնեմ, որ թեպետ ՀՈԱԿ-ները մարտ ամսին աշխատել են 4 օր, և հայտարարաված արտակարգ դրության հետևանքով դադարեցվել են աշխատանքներն ու պարապմունքները, սակայն աշխատակիցների աշխատավարձը վճարվել է ամբողջությամբ:

Ծախսեր

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2020թ. բյուջեի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել են տարբեր տոկոսներով:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 81.0%-ով /175.5մլն. դրամ՝ պլան, 142.2 մլն. դրամ՝ փաստացի ծախս/: Թերակատարումը կազմել է 33.3մլն. դրամ, այդ թվում՝ 0.5մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 1.8մլն.դրամ՝ կրթության և մշակույթի ծախսեր:

Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են միջին հաշվով 97.6%-ով: 2019թվականի 1-ին եռամսյակի համեմատությամբ 2020թվականի նույն ժամանակահատվածում վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 21.3մլն. դրամ կամ 17.3%-ով ավելի: 2020թվականի 1-ին եռամսյակի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 45.4%-ով /պլան՝ 19.2մլն. դրամ, փաստացի ծախս՝ 8.7մլն. դրամ/:

Նախորդ՝ 2019թվականի 1-ին եռամսյակի համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով պակաս ծախսեր են կատարվել 24.9մլն. դրամ, կամ 74.1%-ով պակաս:

Պարտքեր

Համայնքի բյուջեի գծով պարտքերը 01.01.2020թ. դրությամբ կազմել են 50.7մլն. դրամ, այդ թվում՝ փողոցների փոսային նորոգման գծով՝ 42.0մլն. դրամ, այլ պարտքեր՝ 8.7մլն. դրամ:

01.04.2020թ. դրությամբ համայնքի բյուջեի պարտքերը կազմում են 39.5մլն. դրամ:

1-ին եռամսյակի ընթացքում փողոցների փոսային հիմնանորոգման պարտքից մարվել է 7.0մլն. դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Սեան համայնքի ավագանու

14.05.2020թ. N 24-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ 2019Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ /ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ/

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2020 Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ | | | 2019 Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ | | | 2020Թ-Ի ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ |
| 1 | Գույքահարկ համայնքի տարած. գտնվող շենք-շինություններից | 6475.0 | 8449.7 | 130.5 | 6000.0 | 7439.0 | 124.0 | +1010.7 | 13.6 |
| 2 | Գույքահ. փոխադրամիջոցներից | 21150.0 | 16769.5 | 79.3 | 17750.0 | 15831.7 | 89.2 | +937.8 | 5.9 |
| 3 | Հողի հարկ | 2150.0 | 2291.1 | 106.6 | 2250.0 | 2452.9 | 109.0 | -161.8 | -6.6 |
| 4 | Տեղական տուրքեր | 2250.0 | 2679.2 | 119.1 | 2375.0 | 1986.1 | 83.6 | 693.1 | 34.9 |
| 5 | Պետական տուրքեր | 2000.0 | 2377.7 | 118.9 | 1775.0 | 1794.0 | 101.1 | +583.7 | 32.5 |
| 6 | Ընդամենը ոչ հարկային եկամուտներ | 13302.3 | 30087.6 | 226.2 | 14380.2 | 20106.9 | 139.8 | +9980.7 | 49.6 |
| **7** | **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **47327.3** | **62654.8** | 132.4 | **44530.2** | **49610.6** | 111.4 | +13044.2 | 26.3 |
| 8 | ՔԿԱԳ բաժնի պահ. եկամուտներ | 1186.1 | 1186.1 | 100.0 | 0.0 | 0.0 | #DIV/0! | +1186.1 | #DIV/0! |
| 9 | Պաշտոնական դրամաշնորհներ | 103535.0 | 103535.0 | 100.0 | 92274.7 | 92859.4 | 100.6 | +10675.6 | 11.5 |
| **11** | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **152048.4** | **167375.9** | 110.1 | **136804.9** | **142470.0** | 104.1 | +24905.9 | 17.5 |
| 12 | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴ. ԲՅՈՒՋԵ, Ա/Թ | **54000.0** | **4843.7** | 9.0 | **50025.0** | **26786.0** | 53.5 | -21942.3 | -81.9 |
| 13 | Հողի և այլ հիմ.միջոց. օտարում | 24000.0 | 4843.7 | 20.2 | 25025.0 | 2686.0 | 10.7 | +2157.7 | 80.3 |
| 14 | ՎԲ պահուստ. ֆոնդ. հատկաց.ՖԲ | 30000.0 | 0 | 0.0 | 25000.0 | 24100.0 | 96.4 | -24100.0 | -100.0 |
| 15 | Կապիտալ սուբվենցիա | 0.0 | 0 | #DIV/0! | 0.0 | | #DIV/0! | 0 | #DIV/0! |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ | **206048.4** | **172219.6** | 83.6 | **186829.9** | **169256.0** | 90.6 | +2963.6 | 1.8 |

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Սևան համայնքի ավագանու
14.05.2020թ. N 24-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ 2019Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ /ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ/

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2020Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ | | | 2019Թ-Ի 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ | | | 2020Թ-Ի ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄ. 2019Թ-Ի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ |
| 1 | Ընդհ. բնույթի համայնքային ծառայություն. | 35000.0 | 34494.7 | 98.6 | 29887.5 | 26919.7 | 90.1 | +7575.0 | 28.1 |
| 2 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 27000.0 | 26955.1 | 99.8 | 27137.5 | 18044.4 | 66.5 | +8910.7 | 49.4 |
| 3 | Տնտեսական հարաբերութ. | 500.0 | 0 | 0.0 | 0.0 | 0.0 | #DIV/0! | | #DIV/0! |
| 4 | Բնակարան.տնտեսություն | 1000.0 | 554.3 | 55.4 | 0.0 | 0.0 | #DIV/0! | +554.3 | #DIV/0! |
| 3 | Մշակույթի գծով ծախսեր | 7000.0 | 7000.0 | 100.0 | 8192.5 | 5466.6 | 66.7 | +4183.9 | 76.5 |
| 4 | Կրթության գծով ծախսեր | 73000.0 | 71218.0 | 97.6 | 56500.0 | 45872.0 | 81.2 | +25346.0 | 55.3 |
| 5 | Սոց. պաշտպանութ. | 2000.0 | 1954.7 | 97.7 | 3085.0 | 3085.0 | 100.0 | -1130.3 | -36.6 |
| 6 | Վ/Բ պահ.ֆոնդից հատկ. Ֆ/Բ | 30000.0 | 0 | 0.0 | 25000.0 | 24100.0 | 96.4 | -24100.0 | -100.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **175500.0** | **142176.8** | 81.0 | **149802.5** | **123487.7** | 82.4 | +21339.6 | 17.3 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴ. ԲՅՈՒՋԵ, որից** | **19200.0** | **8721.8** | 45.4 | **50262.4** | **33623.9** | 66.9 | -24901.2 | -74.1 |
| 1 | Ընդհ. բնույթի համայնքային ծառայություններ | 1000.0 | 700.0 | 70.0 | 9925.0 | 0.0 | 0.0 | +700.0 | #DIV/0! |
| 2 | Տնտեսական հարաբ. /ճան.տնտեսություն/ | 15000.0 | 6068.1 | 40.5 | 35000.0 | 33432.9 | 95.5 | -27364.8 | -81.8 |
| 3 | Համայնքի ղեկ. աշխատ. Պահպ. ծախսեր | 200.0 | 153.0 | 76.5 | 412.4 | 191.0 | 46.3 | -24100.0 | -12617.8 |
| 4 | Փողոցների լուսավորման ցանցի կառուցում | 2000.0 | 1500.0 | 75.0 | 2925.0 | 0.0 | 0.0 | +1500.0 | #DIV/0! |
| 5 | Բնակարանային տնտեսություն | 500.0 | 0.0 | 0.0 | 1500.0 | 0.0 | 0.0 | | #DIV/0! |
| 6 | Այլ ծախսեր | 500.0 | 300.7 | 60.1 | 500.0 | 0.0 | 0.0 | 300.7 | #DIV/0! |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ | **194700.0** | **150898.6** | 77.5 | **175064.9** | **133011.6** | 76.0 | **20537.5** | 15.4 |